ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հայոց եկեղ. ամուսն. եւ ամուսնալուծ. գործերը վարելու կարգի մասին:—Ժամանակաւոր պարտաւորուած գիւղացիների մասին:—Բազուի Մարդասիրական ընկերութեան գրադարանի հարցը:—Դատաստանական դահլիճում:—Վրաց գրադարանների մասին կարգադրութիւն:—Բարեփոխութիւն միջնակարգ դպրոցներում:—Լիսովեան յեզուով տպուող գրքերը յատիկական տառերով տպելու թոյլտուութիւն:—Դպրոցական հաստատութիւնների առանձին վերատեսչի պաշտօն Թիֆլիսի գիմնազիայում:—Թիֆլիսի գիմնազիայի ընդհանուր նահանգապետ Բորբրիկովի սպանումը:—Մամուլին վերաբերեալ կարգադրութիւններ:

Բարձրագոյն Անունով տրուած Ամենայն Հայոց Պատրիարք Կաթողիկոս Մկրտիչ Ի-ի ամենահպատակ բողոքը Կառավարիչ Սենատի 4-րդ դիպարտամենտի բ. որոշման դէմ, որ տեղի է ունեցել 1902 թ. նոյեմբ. 15-ին և վերաբերում է Էջմիածնի հայ-լուսաւորչական Սինոդում ամուսնական եւ ամուսնալուծական գործերը վարելու կարգին—անհետևանք է թողնուած: Վիճելի ամուսնական գործերի կատարման կարգի մասին Սենատի բացատրութեան մէջ դուրս է բերուած օրէնքից բղխող կարգը, որը որոշում է այդ գործերում Ծայրագոյն Պատրիարքի և Էջմիածնի Սինոդի մասնակցութիւնը հետևեալ կանոններով. 1) Այդ գործերը, ինչպէս «զուտ կրօնականների» թուին չպատկանող, վճռւում են վերջնականապէս, համաձայն 1143 և 1146-րդ յօդուածների, Սինոդի ձեռքով կոլեգիալ իրաւունքով, Պատրիարքի նախագահութեամբ, որ ժամանակ և նրա ձայնը դերակշռութիւն ունի ձայների հաւասարութեան դէպքում: 2) Եթէ տրուած գործի առիթով ծագում է բացատրութիւն պահանջող զուտ-կրօնական հարց,—ինչպէս, օրինակ, եկեղեցական կանոնի գոյութեան և մտքի մասին, կանոնի, որը հաստատում է որոշ հանգամանքներ իբրև հիմք ամուսնութիւնը ոչնչացնելու կամ լուծելու,—այդ ժամանակ Սինոդը պարտաւոր է որոշել, Պատրիարքի ներկայութեամբ, իր եզրակացութիւններն այդ առիթով (յօդ. 1132 և 1147) և այդ օրագրելով՝ ներկայացնել Պատրիարքին (յօդ. 1147), որը և կ'ա-

նի իր մակագրութիւնն այդ հարցի մասին։ Ցետոյ, Սինոդը գործը վճռում է վերը՝ առաջին կէտում ասուած կարգով, ճշտօրէն առաջնորդուելով յիշուած մակագրութիւնով։

—

Նոյն այս էջերում մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսելու մեր երկրի այսպէս կոչուած ժամանակաւոր պարտաւորուած գիւղացիների մասին։ Ինչպէս յայտնի է, 1861 թ. փետր. 19-ին կայացած ճորտերի ազատութիւնից յետոյ կալուածատէրերի հողերի վրայ ապրող գիւղացիները դուրս գալով ճորտական կախումից՝ կարող էին իրանց հողաբաժինների սեփականատէր լինել, յետ գնելով այդ բաժինները կալուածատէրերից *)։ Երբ այդ յետ գնումը կատարուէր, ժամանակաւոր-պարտաւորուած գիւղացիները դառնալու էին սեփականատէր-գիւղացիներ. իսկ մինչ այդ գիւղացիները պէտք է օգտուէին իրանց հողաբաժիններից՝ պարտաւորուելով վճարել կալուածատէրերին որոշ տուրք։ Այդ յետ գնումը կարող էր կատարուել կամ կալուածատէրերի և գիւղացիների փոխադարձ համաձայնութեամբ, ինչպէս սովորական առուծախք, կամ պետական-վարկային օժանդակութեամբ։ Թէ մէկ և թէ միւս դէպքում առանց կալուածատէրերի յօժարութեան գիւղացիները անկարող էին գնել իրանց բաժինները և սեփականատէր դառնալ։ Կալուածատէրերի հողերի վրայ ապրող գիւղացիները Կովկասում իրանց հողաբաժիններից օգտուելու համար վճարում են բերքերի որոշ մասը, 30-ից 4-ը։ Այժմ Թիֆլիսում կազմուած է խորհրդաժութիւն Երևանի, Քութայիսի և Բաքուի նահանգապետներից, նահանգների հաշտարար միջնորդներից և ազնուականութեան պարագլուխներներից. այդ խորհրդաժութեան նպատակն է բնական՝ բերքերով վճարուող տուրքերը փողայինի վերածելու և բացի այդ հողաբաժինների յետ գնման հարցի քննութիւնը։

—

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին՝ Բաքուի Մարդասիրական ընկերութեան գրադարան-ընթերցարանը փակուած էր իշխանութեան կարգադրութեամբ անցեալ 1903 թուի մարտի 10-ին։ Ընկերութեան վարչութեան դիմումը Կովկասի պ. կառավարչապետին՝ թոյլ տալ նորից բանալ գրադարան-ընթերցարանը՝ չյարգուեց այն հիման վրայ, որ ընկերութեան կանոնադրութեան մէջ չկայ գրադարան-ընթերցարան բանալու իրաւունք տուող կէտ։ Ի նկատի ունենա-

*) Տես «Մուրճ» 1901 թ., № 3, երես 223—225.

լով այդ բանը, Մարդ. ընկ. վարչութիւնը առաջարկեց յունիսի 12-ին կայացած ընդհանուր ժողովին որոշել՝ դիմել ներքին գործերի պ. մինիստրին, խնդրելով աւելացնել ընկերութեան կանոնադրութեան մէջ գրադարան-ընթերցարան բանալու իրաւունքը։ Ընդհանուր ժողովը տուեց իր համաձայնութիւնը։

—

Ներկայ յունիսի 12-ին Թիֆլիսի դատաստանական պալատում քննւում էր երկու գործ, որոնք վերաբերում էին Էջմիածնի հայ-լուսաւորչական սինոդի պահանջներին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնից հայ եկեղեցու անշարժ կալուածքների մասին (41 խանութ), որոնք գտնւում են Երևանի նահանգի Ալեքսանդրոպոլ քաղաքում և Ղամարլու գիւղում և որ Կովկասի ուսումնարանական վարչութիւնը խլել էր հայ եկեղեցուց, 1898 թուի մարտի 26-ին Բարձրագոյն հրամանի հիման վրայ։ Երևանի նահանգական դատարանը ղեկավարուելով 1903 թուի յունիսի 12-ի օրէնքով կալուածները արքունական վարչութիւնների իրաւասութեան տակ դնելու մասին, գտաւ, որ ներկայումս հոգևոր վարչութիւնը այդ դատի մէջ կողմ չէ, որովհետև նրա պահանջը արքունական կալուածքին է վերաբերում, որի մասին վէճը երկու արքունական վարչութիւնների միջև ենթակայ չէ դատաստանական հիմնարկութիւններին և պէտք է վճռուի երկու մինիստրութիւնների համաձայնութեամբ, վարչական կարգով, և այդ հիման վրայ որոշեց Էջմիածնի սինոդի երկու պահանջներն ևս անհետևանք թողնել և գործը դադարեցնել։

Էջմիածնի սինոդի հաւատարմատար երդուեալ հաւատարմատար Ս. Ս. Մէլիք-Ադամեան հիմնուելով 1903 թուի յունիսի 12-ի նոյն օրէնքի վրայ՝ ապացուցանում էր դատաստանական պալատում, որ այդ օրէնքով պահպանուած է հայ եկեղեցու սեփականութեան իրաւունքը իրան պատկանող կալուածների վրայ, և որ այդ հիման վրայ ներկայ դէպքում խօսք չէ կարող լինել այն մասին, թէ վիճելի կալուածները պատկանում են արքունական վարչութիւններին, որոնց իրաւունք է տրուած միայն կառավարել եկեղեցական կալուածքները։ Այդ պատճառով էլ որովհետև Քաղ. Դատ. Գան. 1298 յօդուածի հիման վրայ հոգևոր վարչութիւնների կալուածքներին վերաբերեալ վէճերը ուրիշ արքունական վարչութիւնների հետ ենթակայ են դատաստանական տեղերի վճռին ընդհանուր սահմանուած դատաստանական կարգով, Մէլիք-Ադամեանը անկանոն գտնելով Երևանի նահանգական դատարանի վճիռը՝ գործը դադարեցնելու մասին, խնդրում էր

դատաստանական պալատին հարցուփորձի ենթարկել իր մատնացոյց արած վկաներին՝ վիճելի կալուածքների վրայ հայ եկեղեցու ունեցած իրաւունքների վաղեմիութեան մասին։

Ուսումնարանական շրջանի լիազօր պ. Կէնգէրլինսկիյ խնդրում էր պալատին հաստատել Երևանի նահանգական դատարանի վճիռը որպէս կատարելապէս կանոնաւոր՝ առանց հետևանքի թողնելով Էջմիածնի սինոդի հաստատմատարի միջնորդութիւնը։

Գրոկուրորի օգնականը այն կարծիքը յայտնեց, թէ պէտք է յարգել Մէլիք-Ադամեանի միջնորդութիւնը։

Դատաստանական պալատը որոշեց. Երևանի նահանգական դատարանի միջոցով հարցուփորձի ենթարկել Էջմիածնի սինոդի հաստատմատարի մատնացոյց արած վկաներին այն մասին, թէ հայ եկեղեցին վաղուց տիրում է վիճելի կալուածքներին։

«Մշակ»

—

«Ծնորիս-Փուրցելի» լրագրի ասելով տպարանների, գրավաճառանոցների և գրադարանների վերատեսուչը յայտնել է վրացիների մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան վարչութեանը, թէ այդ ընկերութեան հսկողութեան տակ գտնուող Թիֆլիսի գրադարանները այսուհետև պէտք է ենթարկուին ժողովրդական գրադարանների մասին գոյութիւն ունեցող կանոններին։ Այդ կանոնների համաձայն յիշեալ գրադարաններում չեն կարող թողնուել վրացերէն գրքեր ու պարբերական հրատարակութիւններ։ Վերատեսուչը 2 ամիս ժամանակ է տուել, որ վարչութիւնը լուսաւորութեան մինիստրից թոյլտուութիւն խնդրէ այդ մասին։ Իսկ մինչև այդ հարցի լուծումը վրացերէն գրքերն ու թերթերը պէտք է վերացուին գրադարաններից։

—

Լուսաւորութեան մինիստր գեներալ-լէյտենանտ Գլազով ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին ուղարկած շրջաբերականում առաջարկում է 1904—1905 ուսումնական տարուայ ընթացքում յունարէն լեզուի աւանդումը դարձնել ոչ պարտադիր։ Այդ լեզուն վերջերումս աւանդում էր գիմնազիաների V-րդ դասարանից սկսած ցանկացողների համար. դրանցից որոնք փոխադրւում են VI-ը, պէտք է պարտադիր սովորէին միանգամ ընտրած այդ հին լեզուն։ Այժմ այդ պարտադիր ուսումից ազատւում են և այդպիսիները, և առհասարակ յունարէն լեզուն դառնում է լրացուցիչ, ոչ պարտադիր առարկայ, իսկ շաբաթական այն ժամերը, որ յատկացրուած է-

ին յունարէնի դասաւանդութեան, աւելացրուած են ռուսերէնի, լատիներէնի, ֆիզիկայի, պատմութեան և ֆրանսերէնի դասերին։

—

Ապրիլի 24-ին Բարձրագոյն հաստատուած է մինիստրների կոմիտեի որոշումը, որով թոյլատրուում է Ռուսաստանում տպել լիտովեան լեզուով գրքերը՝ մինչև 1863 թուականը ընդունուած լատինական ձևի տառերով, որի փոխարէն հրամայուած էր գործադրել միմիայն ռուսական տառերը։ Լիտովցիների թիւը Ռուսաստանում հասնում է մօտ 3 միլլիոնի։ Լիտովական ազգը պատկանում է հնդկա-եւրոպական ընտանիքին և իր լեզուով բռնում է գերմանականի և սլաւոնականի միջին տեղը։

—

Բարձրագոյն հաճութեամբ Ֆինլանդիայում հիմնուում է ռուսաց դպրոցական հաստատութիւնների առանձին վերատեսչի պաշտօն. նա կ'ունենայ առանձին կանցելեարիա և գործավար։

—

Յունիսի 3-ին Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինգֆորսում սպանուեց գեներալ-ադիւտանտ Նիկոլայ Իվանովիչ Բոբրիկովը, որ 1898 թուականից նշանակուած էր Ֆինլանդիայի ընդհանուր նահանգապետ և ֆինլանդական զօրքերի հրամանատար։ Ռուս. հեռագրական գործակալութեան հաղորդածով «յունիսի 3-ին գեներալ-ադիւտանտ Բոբրիկովը՝ առաւօտեան ժամը 11-ի մօտերը ոտով եկաւ սենատի շէնքը։ Արձակելով իրան ուղեկցողներին, գեներալ-նահանգապետը մենակ մտաւ նախագահութիւնը և բարձրացաւ սանդուխքով։ Միջին յարկի նախասրահում գեներալ-նահանգապետի վրայ 3 անգամ ատրճանակ կրակեցին։ Մէկ գնդակը քերծեց նրա կուրծքը, դէմ առնելով Վլադիմիրեան շքանշանին, երկրորդը վտանգաւոր վնաս հասցրեց փորի մասին և երրորդը թեթև կերպով վիրաւորեց վիզը։ Ատրճանակի ձայնից օգնութեան վազեց սենատի ծառան։ Ոճրագործն ատրճանակի երկու հարուածով սպանեց իրան։ Զնայելով ծանր վէրքերին՝ գեներալ-նահանգապետը մենակ մտաւ նիստի դահլիճը և սենատորների հարցերին պատասխանում էր՝ հանգստացնելով նրանց։ Զգեստի վրայ երևացող արիւնից սենատորները նկատեցին, որ գեներալ-նահանգապետը վիրաւորուած է։ Սկզբնական վիրակապութիւնը կատարեց այն բոպէին հրաւիրուած զինուորական բժիշկը։ Երբ գեներալ-նահանգապետին տեղափոխեցին իր տունը, կոչուած

պրոֆեսսորներն անհրաժեշտ գտան կլինիկայում օպերացիա անել։ Լիակատար գիտակցութիւնը պահպանած լինելով՝ գենեբալը կարգադրութիւններ էր անում և հաղորդուեց։ Կէսօրուայ ժամը 1-ի մօտերը գեներալ-նահանգապետին պատգարակներով տարան կլինիկա, ուր անմիջապէս օպերացիայի ենթարկեցին, որ տևեց 55 րոպէ։ Հանեցին գնդակի կտրած վնասուած բարակ աղիքի մասը և գնդակը։ Արիւնհոսութեան պատճառով սրտի գործունէութիւնը սկսեց թուլանալ և դրութիւնը յուսահատական դարձաւ։ Դիշերուայ ժամը 1-ից 7 րոպէ անց գեներալ-նահանգապետը հանգիստ վախճանուեց։ Մարդասպանը դպրոցական մասի գլխաւոր վարչութեան աստիճանաւոր Եւգենիյ Շաումանն է, 1900 թուին արձակուած սենատոր Շաումանի որդին։ Անմիջապէս ձեռնարկուեց նախնական քննութեան։ Մասնակիցները չեն գտնուել։ Ազգաբնակութիւնը հանգիստ է»։

—

Մամուլին վերաբերեալ կարգադրութիւններ.

—«Прав. Вѣст.»-ում տպուած է. «1904 թուի մայիսի 28-ին։ Ի նկատի առնելով «С.-Пет. Вѣд.» լրագրի «Նկատողութիւններ» վերնագրով յօդուածները (№ № 135 և 137, մայիսի 20 և 22-ին), որ իզուր վրդովեցին հասարակական կարծիքը, ներքին գործերի մինիստրը մամուլի մասին եղած օրէնսդրութեան 1890 թուի հրատարակութեան օրէնսգրքի XIV հատորի 144-դ յօդուածի հիման վրայ որոշեց. յայտնել «С.-Пет. Вѣд.» լրագրին երկրորդ նախազգուշացում յանձին նրա հրատարակչի՝ իշխան Էսպեր Ուխտոմսկու և խմբագրի՝ ազնուական Ալեքսանդր Ստոլբիպինի։

—«Кав.» պաշտօնական լրագրում կարդում ենք. «Թիֆլիսում, Տիգրան Նազարեանի խմբագրութեամբ հրատարակուող «Տարազ» շաբաթաթերթի ընասակար ուղղութեան պատճառով՝ Կովկասի իշխան կառավարչապետը ցենզուրական կանոնադրութեան 154-դ յօդուածի ծանօթութեան հիման վրայ՝ անհրաժեշտ համարեց դադարեցնել այդ շաբաթաթերթը և նրա յաւելուած «Աղբիւր» ամսագիրը չորս ամսով»։

—Ցենզուրական օրէնքների 121 յօդուածի հիման վրայ Թիֆլիսում անցեալ տարիները հրատարակուող «Аргонавтъ» լրագիրը, որի հրատարակիչն էր ազնուական Իվան Տխորժեւսկին՝ դադարեց։ Իսկ օրէնքի այդ յօդուածը հետևեալն է. «Այն մի պարբերական հրատարակութիւն, որը մի որևէ պատճառով մի ամբողջ տարի լոյս չէ տեսնում, համարւում է